№ 123 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՈՒՆԻՍԻ 11 1902 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՈՒՆԻՍԻ 11 № 123

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թղթակցում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
խ-րուբլանոց տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԻ» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը, վեց րուբլի, մէկ ամսվանը—մէկ րուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 դոլար: Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Բայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամռվայ զբօսանքներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Շուշուց. Նամակ Բալախանիից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղացու ցաւերից:

ԱՄԱՌՎԱՑ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

Ամռվայ ամիսներում կենտրօնական քաղաքների բնակիչների մի նշանաւոր մասը տեղափոխվում է դէպի գաւառները՝ թէ հանգստանալու եւ թէ աւելի առողջարար օդում ապրելու համար: Այդ մարդկանց մէջ մենք տեսնում ենք ուսուցիչների, ուսանողների, զանազան տեսակ պաշտօնեաների եւ բազմաթիւ ուրիշ անձերի, որոնց մէջ սակաւ չեն ինտելիգենտ անհատներ, որոնք կարող էին իրանց ամռվայ օրերը օգուտով եւ հետաքրքրութեամբ անցկացնել թէ իրանց եւ թէ ուրիշների համար:

Մեզանում դեռ զարգացած չէ այն սովորութիւնը, որ վաղուց պատուաստվել է արտասահմանում, այն է ձանապարհորդութիւններ կատարել մի որոշ ծրագրով, կազմակերպել գիտական եւ կրթական զբօսանքներ եւ ժողովել զանազան տեսակ նիւթեր, որոնք նպաստէին երկրի ուսումնասիրութեան: Այդ ճանապարհորդութիւնները եւ զբօսանքները ծանօթացնում են մարդկանց երկրի հետ, լրացնում են աշխարհագրութեան եւ հայրենագիտութեան նրանց ունեցած պակասորդը եւ հաստատում են կապ երկրի եւ մարդկանց մէջ:

Երբ ամառը անց է կացրված խելացի կերպով, միացնելով զուարճալին օգտակարի հետ, մարդ վերադառնում է կենտրօնական քաղաքը կազդուրված եւ թարմացած թէ ֆիզիքապէս եւ թէ մտաւորապէս: Լիակատար կերպով անցկացրած ամառը առատ նիւթ է մատակարարում ձմեռվայ խելացի պարապմունքների համար: Ահա մի պարոն, որ ժողովել է հետաքրքրական նիւթ եւ կարդում է զեկուցում աշխարհագրական ընկերութեան մէջ, ահա մի ուրիշը, որ հարդում է իր տպաւորութիւնները գիւղատնտեսական, երկրորդը հնագիտական, իրաւաբանական եւ ուրիշ ընկերութիւնների նիստերում եւ այլն: Բազմաթիւ մասնաւոր նիւթերից եւ տպաւորութիւններից վերջի վերջոյ կազմվում է որոշ համադրութիւն, որ լոյս է սփռում երկրի ուսումնասիրութեան վրա, առաջ է մղում նոր հարցեր եւ առիթ է դառնում ապագայ աւելի բազմատեսակ եւ աւելի լուրջ ուսումնասիրութիւնների համար:

Խելացի կերպով ամառ անցկացնելու ցանկութիւնը պէտք է գրդռ մարդկանց կազմակերպելու ճանապարհորդութիւններ եւ զբօսանքներ որոշ ծրագիրներով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Կ. Պոլսի հայոց լրագիրներում մի քանի ժամանակներից ի վեր մենք տեսնում էինք «Նոր հրաչք մը» վերնագրի տակ մի լուր, որի էութիւնը այն էր, թէ Արմաչում մի կին սուրբեր է տեսել: Նոր եւ նոր տեղեկութիւններ էին հաղորդում լրագիրները, առանց յանդգնելու որ եւ է կասկած յայտնելու, իբրեւ իրողութիւն, իբրեւ փաստ, որի դէմ վիճել չէ կարելի: Կարդում էինք այդ տեղեկութիւնը եւ չէինք զարմանում: Չէինք զարմանում, որովհետեւ Կ. Պոլսի մթնոլորտում ուրիշ տեսակ վերաբերմունք դէպի այդ կրօնական հրաչքը չէր էլ կարելի սպասել: Վերցրէք Կ. Պոլսի լրագիրները. եթէ չը լինեն կրօնական արարողութիւնների, ծէսերի, տօների բացատրութիւնները, եթէ չը լինեն հոգեւորականները, ոչ մի այլ նիւթ չէին ունենայ լրագիրները: Հասկանալի է, որ որքան էլ պարզ լինի թէ հրաչքների դարը վաղուց անցել է անդառնալի կերպով, այնուամենայնիւ, իբրեւ ընդհանուրի տրամադրութիւն չատ յարմար է գտնվում նոր երեւան եկած հրաչքի մասին մանրամասն պատմելը, աղմուկ հանելը: Լրագրական տեղեկութիւնները այդ հրաչքի մասին ուղղակի բէկլամային բնաւորութիւն էին ստացել եւ չէր կարելի խորապէս չը ցաւել, որ միջնադարեան զառանցանքներ տարածողները կրօնամոլ ֆանատիկոսները չեն, զանազան վարդապետներ, ոգեւոր կանայք, այլ արդատիպ մեքենայի վրա տպվող լրագիրը: Բայց վերջապէս բանականութիւնը յաղթող հանդիսացաւ. վերջապէս զբաղադող ընթերցողների պղտորված միտքը կարող է մի քիչ պարզվել: Արմաչի հրաչքը պաշտօնապէս հերքվեց վանքի կողմից. ահա ինչ է գրում Թորգոմ վարդապետը «Ծաղիկ» լրագրի մէջ.

Նոր հրաչքի (?) մը մասին վերջերս ասկէց տրուած տեղեկութեան մը մէջ սխալ եւ սուտ կէտեր կը գտնուին:

Քանի մը տողով ներկայացնենք բուն եղելութիւնը:

Բարեպաշտ կին մը, որ, ընտանիքին մէջ կռուտա դէպքեր անցած ըլլալուն համար, չէր կրցած Զատկի առթիւ հաղորդուիլ, առտու մը, ծխնելոյղին ներքին կողմը կը կարծէ տեսնել պատարագիչի զգեստով եկեղեցականի մը կերպարանքը. եւ, արդեամբ ալ ցոյց տալու համար զայն՝ նոյնը տեսնել չը կրցողի մը, սեւցած պատին վրա փայտի կտորով մը կը նշանակէ տեսնուած դէմքին գիծերը: Այսպէս կը նկարուի պատկերը (?): Թերահաւատներ կը ծեփեն պատը առ ի պիտի վճարէին եւ Գալօի հայրական անապատ ժառանգութիւն երկու հարիւր մանէթ պարտքն իր հակայական, վիթխարի տոկոսներով: Անտէր մնար այդ պարտքը, որ ոչ վերջ ունէր, ոչ վախճան: Տասնուվեց տարվան սեւ պատմագրութիւն ունէր այդ անտէրը: Գալօին «կարգելու» (պահակելու) ժամանակ նրա հայրը չիսուն րուբլի էր վերցրել Մարտիրոս աղայից ու թէեւ տարէց տարի հայրն էլ, ինքն էլ տալիս էին տոկոսը, բայց դարձեալ գիւղի գրագրի «հաշուով» դարձել էր երկու հարիւր մանէթ: Երկու հարիւր մանէթ պարտքի տակ տքացող գիւղացուն էլ ով բան կը հաւատար: Մինչդեռ Գալօին 50—60 մանէթ էր պէտք 2—3 սուտա ցանելիքի՝ սերմի, մի այդքան էլ ուտելիքի, մինչեւ նորի հասնելը: Անխուսափելի կարիքը Գալօին էլ, կնօջն էլ լեզուն կապ էր ձգել: Լուռ էին, բայց երկուսն էլ անքուն, աչքերը բաց: «Երկու օրվան ալիւր չը կար», էլ ում քունը կը տանէր...

—Գալօ, ղորթ (ուղիղ) Օննիկին հախը (վարձը) չէր տայ Մարտիրոս աղան, սօմառըմ գարի առնէիր, տեօր (մինչեւ) աչէինք Աստուած ինչ կուտար...

—Ի՞նչ հախ, աղչի, էն չատունց փարին չահին (տոկոս) է հաչէլ, հըլլը (դեռ) օրը տասը հեղ ա մնացած չահը կուզէ, թէ չէ եզներդ ու արտերդ սիւդով կառնեմ, կըսէ..., հիմի փարա կուտայ մեզի... Երէկ նայաս դուռ ու դրկից վրա եղան, էսքանըմ ըսաւ, թէ թող արտերն ինձի տայ, ինքն ա գայ փարին չահին տեղը մարաթայ ըլլի, ուտելիքը տամ, գլխէն ա (դրամագլխից) բանըմ պակսեցնեմ...

Դարձեալ լուռ են. խուլ խաւարն է միայն կամաց փսփսում ու գիշերվան զով զեփիւռը դուրսը ամուր չնկչնկուն: Ժամեր անցան մէկը միւսի ետեւից: Աքաղաղը իր առաջի կանչը կանչեց, բայց խեղճ Գալօն Նազլուի հետ դեռ անքուն են: Անկողինը կարծես փշով էր լցվել. «Մարաթայի» գէշ անունը, փուչ անունը խաթացողի քունը էլ երբ կը տանի...

—

Աչունք էր: Գարուն, ցորնի կարմիր դեղին արտերը կամ քաղվել են, եղէն եղել, կամ թէ

փորձ. բայց իզուր, խղճահար կինը կը կարծէ տեսնել միշտ նոյն դէմքը։ Իրողութիւնը կը հրապարակուի. հետաքրքիրներ կը խուժեն, հաւատաւորի նախագրաւումով։ Շատեր կը յայտարարեն տեսնել, ինչ որ սակայն ամենէն դիտելի կէտն է, ոչ թէ նոյն՝ այլ մէկը Ս. Կուսին, երկրորդ մը Լուսաւորչի, ուրիշ մը Ս. Սարգսի, ամէն ոք իր սիրած սուրբին դէմքը—Զաւեշտը իրեն արժանի վերջաւորութեամբ մը փակելու համար, մէկը կը տարաձայնէ պատուէր ընդունած ըլլալ սուրբէն՝ թէ պէտք է մատաղ մը զենուի, ծախքին կէսը հոգացուելով ժողովուրդին, միւս կէսը տան տիրոջ կողմանէ։ Խեղճ մարդը, որ դահեկանին դէմ կը դողար, կը տիպուի այսպէս՝ երկու խոյի ծանրութեամբ պարտքի մը տակ մնալ, կերակրելու համար խուժան մը անօթիներ։

Այս է ահաւասիկ հրաչք (?) ըսուածը, որ՝ աւելի ճիշտ՝ բացատրուող բանդագուշանք մըն է միայն, եւ որ, գործնական օգուտ մը չունենալէն զատ—վասն զի այս առթիւ գէթ բժշկութիւններ մըն ալ չըսուեցան—չքաւոր ընտանիքի մը ապրուստի պիւտճէին վրա չորս մէճիտէն աւելի պարտք մը բարդեց, քանի մը քաղցած խաբեբաներու ախորժակը պարարելու համար միայն։

Հիմակ որ երկրագործի զբաղումները սկսած են, եւ ուխտավայր (?) տունն ալ չերամով գրաւուած, իսպառ հանդարտած է տուտ բարեպաշտութեան ծիծաղելի եւ ցաւալի այդ իրարանցումը որ՝ իր ծագումին մէջ ալ՝ նկարագրուածին չափ ազնկալից չէր եղած արդէն։

Ահա ինչ բաներով են օրերով զբաղուում Կ. Պոլսի լրագիրները. ահա ինչից են ազնուկները ստեղծուում։ Դժբախտ մամուլ...

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒԻՑ

—

Յունիսի 6-ին

Վերջերս մեզանում օրվայ հարցը ընդհանրապէս թատրոնի եւ մասնաւորապէս Սիրանոյշի չուրջն է պտտուում։ «Մենք բախտ կունենանք կարգին ներկայացում տեսնելու, Սիրանոյշին լսելու»։ այս խօսքերն էք լսում ամեն տեղ։ Թատրոն յաճախելու տրամադրութիւնը ընդհանուր է։ Եւ այդ չատ հասկանալի է. նախ որ մեզ մօտ հիւր են—բացի մի քանիսից—մեր բեմի աչքի ընկնող դերասաններն ու դերասանուհիները, որոնք ամբողջ ամառվայ ընթացքում մի չարք կանոնաւոր ներկայացումներ կը տան, իսկ միւս կողմից էլ մեր հասարակութիւնը ձմեռվայ անչարժութիւնից ոտքի փլուելով՝ ուզում է գոնէ ամառը մի քիչ ազատ չունչ քաշել եւ, բացի կլուբի դահլիճում տրվող ձանձրացուցիչ պարերեկոյթներից, մի կարգին ներկայացման երես տեսնել։

Ահա թէ ինչու է նա ուրախութեամբ յիշատակում Սիրանոյշի անունը, ահա թէ ինչու է նա ողջունում ամբողջ խմբի գալուստը։ Ընդհանուր տրամադրութիւնը այնպէս է, որ գալիս էք այն եզրակացութեան, թէ հեռու չէ այն օրը, երբ թատրոնը կը դադարէ իր գոյութիւնը պահպանել տներն ուղարկած տոմսակներով եւ կը դառնայ հասարակական կեանքի պահանջներից մէկը։ Եւ ինձ թւում է, որ այս ամառ թատրոնական դահլիճը նոյն իսկ բաւականութիւն չէ տալու հանդիսականներին, այնքան են խօսում թատրոնից, մանաւանդ որ ղգալի կերպով սկսվել է ամարանոց եկողների հոսանքը։ Ամեն օր մի քանի տասնեակ եւ նոր մարդիկ են մտնում Շուշի, այնպէս որ մեր միակ զբօսատեղին՝ յայտնի բուլվարը, արդէն խայտարղետ է դարձել, նորեկներով։ Այսպէս ուրեմն, հասարակութեան տրամադրութիւնը՝ ըստ երեւոյթին, կարգին ներկայացում տեսնելու գրաւական է, որ մեր բեմի քրտնաջան մշակները թէ բարոյական միխիթարութիւն եւ թէ նիւթական օժանդակութիւն կունենան։ Բարոյական եմ ասում, որովհետեւ մեր կեանքում չարքաշ հայ դերասանը բացի նրանից, որ նիւթականի կողմից երբէք չէ ապահովվում—չատ անգամ աւելի մեծ կորուստ է ունենում, բարոյական կորուստ, երբ զգում է, որ իր ձայնը հնչում է միայն դատարկ դահլիճում։ Իսկ ներկայ դէպքում թւում է, որ նիւթականն ու բարոյականը ձեռք ձեռքի տուած պիտի ոգեւորեն մեր յարգելի դերասանուհիներին եւ դերասաններին։

Ողջունում ենք այդ միութիւնը, բերկրանքով ենք արձանագրում, որ թատրոնը Շուշու նման գաւառական քաղաքում օրվայ հետաքրքիր հարց է դառնում։ Իսկ թէ որքան անկեղծ է այդ հետաքրքրութիւնը, թէ ինչ չափով է թատրոնը անհրաժեշտ պահանջ դարձել մեր հասարակութեան համար—այդ ցոյց կը տայ խմբի առաջին ներկայացումը, որ տեղի կունենայ ամսիս 14—15-ին։ Երանի թէ խաբված չը լինէինք։

Աւելորդ չէր լինի յիշատակել եւ մի բան, որը կարող էր ներկայացումների աջողութեան, ի հարկէ մուտքի կողմից, երկրորդ գրաւականը լինել։ Դա տեղերի էժանացնելու հարցն է, մանաւանդ թատրոնական դահլիճի աթոռների վերջին շարքերում, ուր ուսանողները, աշակերտներն ու աշակերտուհիներն են տեղ բռնում։ Ես գիտեմ մի քանի ընտանիքներ ու անձնաւորութիւններ, որոնք պատրաստ են նոյն իսկ ամառվայ աւօնըմենտ տոմսակ վերցնել, եթէ միայն գները մի քիչ էժանացրած լինէին։ Ահա այդ կարեւոր խնդրի վրա ենք հրաւիրում խմբի ուշադրութիւնը։

Մ. Ղ.

ԱՄՄԱԿ ԲԱԼԱԽԱՆԻՑ

—

Յունիսի 4-ին

Սիրողների ներկայացումների սեզոնը վերջացաւ. վերջին ներկայացումը տեղի ունեցաւ մայիսի 31-ին, տուեցին «Ընտանեկան գաղտնիք» (Զեխովի) եւ «Օրթաճալի քէֆը»։ Մինչեւ այժմ տեղի ունեցած եւ ոչ մի ներկայացում այնքան սահուն ու կոկիկ չէր անցել, որպէս «Ընտանեկան գաղտնիք» զուարճալի կօմեդիան. իսկ աւելնից աչքի ընկնողը տիկին Եարեանն էր Ստեփանիկի չարաճճի դերում։ «Օրթաճալու քէֆի» մասին խօսելն իսկ աւելորդ է...։

Այժմ, երբ ներկայացումները վերջացան, կարելի է մի յետադարձ հայեացք գցել. Բալախանիում ժողովրդական ներկայացումները սկսվեցին ապրիլի 17-ից եւ վերջացան մայիսի 31-ին. մօտ 1½ ամսվայ ընթացքում տեղի ունեցան 7-ը ներկայացումներ, ամեն մի ներկայացման բաց էր թողնվում, ինչպէս լսեցինք, մօտ 190—200 տոմսակ. ուրեմն 7-ը ներկայացման չաճախել են մօտաւորապէս 1400 այցելու, մի չնչին թիւ Բալախանիի պէս բանուորաչատ տեղում։

Աես քաղաքում ներկայացումները սկսվեցին դեկտեմբերի 10-ից եւ մինչեւ սեզոնի փակվելը տեղի ունեցաւ դարձեալ 7-ը ներկայացում մօտ 6 ամսվայ ընթացքում, հաւարեա ամիսը մէկը։ Սես քաղաքում իւրաքանչիւր ներկայացման չաճախորդ է եղել միջին թիւով 150—160 այցելու, ուրեմն 1120 մարդ։

Սես քաղաքում, չը նայելով որ դահլիճը հարեւտաբար աւելի մեծ է, քան Բալախանիինը, բայց այցելուները հաւեւտաբար աւելի քիչ են. դրա պատճառը մասամբ վերագրում են գործերի դադարման գործարանատերում։ Այժմ արդէն պէտք է մտածել ապագայ սեզոնին գործը աւելի հիմնաւոր կերպով տանելու համար. մինչեւ այժմ տեղի ունեցան չատ սխալներ եւ թիւրիմացութիւններ. ի հարկէ առանց դրանց չէր կարելի, որպէս նոր գործ. բայց այդ այժմ որոշ չափով իմացվեց իւրաքանչիւր սիրողի կարողութեան չափը եւ նոյն իսկ աչքի ընկան մի քանի ընդունակ ոյժեր։

Պիեսաները մինչեւ այժմ ընտրվում էին չատ վայրիվերոյ, այն ինչ այժմ դրա համար կոմիտէ կայ ընտրված, եւ վերջապէս աւելնաւոխած անյարմարութիւնը բեմի եւ դահլիճի փոքրութիւնն ու անյարմարութիւնն էր, որ յոյս կայ նորը եւ աւելի յարմարը ձեռք բերելու։ Տոմսակների խնդիրը նոյնպէս չատ միակողմանի է կատարվում. միշտ սիրողները իրանց մէջ են բաժանում տոմսակները, իւրաքանչիւրը վերցնելով 10—15 հատ. այն ինչ յայտարարվում է, թէ տոմսակներ կարելի է ստանալ ներկայացման օրը կասսայում, իսկ կասսայում ոչինչ չէ լինում. այս առիթով միշտ դժգոհութիւններ եւ նոյն իսկ զրպարտներ են տեղի ունենում։ Մենք հրապարակով բողոքում ենք այդ անարդար վարմունքի դէմ։ Վերջացնելով մեր խօսքը, յայտնում ենք մեր չնորհակալութիւնը յարգելի սիրողներին իրանց գործ դրած աշխատանքի եւ եռանդի համար. նոյնպէս եւ պ. Ա. Ծատուրեանին, որը իր ինժեներ ընկերների քրմական չրջանից դուրս գալով, հատուկ ծառայողների հետ ձեռք տուած՝ գործը առաջ էր տանում։

Կ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻ

—

Պետերբուրգից «Кавказъ» լրագրին հեռագրում են, որ չորեքչաբթի, յունիսի 5-ին, Նորին Կայսերական Մեծութեան Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնային բաղնուէր ներկայանալու Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Ս. Գոլիցինն։

—

Կարա-Մուրզայի աչխատութեան հատուցանքն, 1) Բագուից, Ա. Գալստեանից 1 րուբլի, 2) Եկատերինօդարից, Ս. Զիլինկարեանցի միջոցով 12 ր., որ նուիրել են Ղ. Գ. Ալիազեաններ, Վ. Բարսեղեան, Ս. Ուլուխանեանց եւ Ս. Զիլինկարեանց, իւրաքանչիւրը 2-ական րուբլի, եւ 3) Գանձակից, Ա. Պետրոսեանի միջոցով ուսուցչական ժողովին մասնակցող գիւղական ուսուցիչների կողմից 7 րուբլի։ Այդ գումարները, նախկին ժողովածների հետ, կազմում են 828 րուբլի։

—

Մեզ ուղարկված է «Zeitschrift des Vereins fur Volkskande»-ի ներկայ տարվայ երկրորդ տետրը, որի մէջ տպված է պ. Բ. Խալաթեանցի մի յօդուած «Հայկական դիցազնական առասպելների» մասին։ Յօդուածը դեռ չարունակելի է. վերջանալուց յետոյ մենք առիթ կունենանք դրա մասին խօսելու։ Բերլինի «Der Tag» պատկերազարդ թերթի 255 համարում տպված է նոյն պարոնի մի յօդուածը «Հայկական ճարտարապետութեան յիշատակարանների» մասին։ Բերլինի մի ուրիշ թերթից տեղեկանում ենք, որ պ. Խալաթեան-

---

փռվել, գետին կպել, պատերազմի դաշտ դարձել։ Դաշտը կարծես արիւն էր լալիս. մեծ հեղեղի սեւ ակռաներ, խիստ ագուրի դառն արցունքի հետքերի պէս, լերան լանջով փռվել են ցած։ Գէչ տարի էր, չատ գէչ տարի այդ տարին... Քաղի կիսին կարկուտն եկաւ, ցանքսի կէսը սրբեց տարաւ, չատ գիւղացու լացացրեց, տունն ու տեղը աւրեց... Էլ ձիւնն եկաւ էն գիւղացու խեղճ գլխին, ով օր առաջ կանաչ կանաչ հնձել պրծել չէր արտը։

Ամպ ու ջամբ մի օր էր։ Առաւօտից \ մանր անձրեւը մայիսվայ պէս մաղում էր։ Դուրան անձրեւ էր, թմնութմնջանք, ցեխուճխանք, մարդ չէր ուզում դրսի երեսը տեսնել։ Իրիկնադէմ օրնի մեծ-մեծ սայլերը ճրոլթիով չարան-չարան մտան գիւղ։ Հինգ սայլ մէկից թափում էին Մարտիրոս աղի մեծ կալը։ Նրանցից մէկն էլ Գալօն էր։ Մի ժամվայ մէջ դիզվեց «թայան» (դէզը)՝ գարու ահագին դէզը։ Միստ կարկուտը թարսի նման այդ անգամին գիւղի այն կողմը չէր զարկել, ուր Գալօի արտերն էին։ Անտէր կարկուտ, ցուրտ ու եղեամ, ցաւ ու փորձանք կարծես աղքատ, խեղճ անձարի, թոյլ անզօրի համար են միշտ... եւ Աստուածն էլ միշտ հարուստի, ուժովի կողմն է պահում... Քանի Գալօն դէսից դէնից «փոխ» վերցրած, պարտքով գնած սերմով ցանում էր արտերն իր հաշար, կամ կարկուտն էր գալիս խփում, կամ երաշտը այրում, խանձում, կամ եղեամը սրբում, տանում, սառեցնում, մուկը կորում, ճիճուն ուտում... իսկ այդ տարին, որ «դանակը ոսկրին հասած»՝ ճարը կտրած Մարտիրոս աղին «մարաբայ» էր մտել ու այդ տարին նրա համար հերկել, ցանել, նրա արտերին ոչ մուկ-մժեղ, եղեամ, կարկուտ, ոչ էլ ճիճու մօտեցաւ. կարծես դրանք էլ գիւղացիների պէս դողում, վախում էին Մարտիրոս աղուց... Եւ խեղճ Գալօն քանի սայլ բրնձի պէս գարի հնձեց իր տղայի ու աղջիկների հետ (մարաբայի ամբողջ ընտանիքն աչխատում է աղայի համար) եւ պարտք «տոկոսի» տեղ դիզեց Մարտիրոս աղայի կալը եւ այդ բոլորի փոխարէն պիտի ստանար Գալօն մի կտոր հաց... չոր ու ցամաք գարու հաց...

Անձրեւն արդէն դադարել էր, բայց ցիլ քամին բոլոր ուժով դեռ փչում էր։ Մութ գիշեր էր, երբ Գալօն տունն եկաւ։ Շաբթով կրակի երես չը տեսած թոռների չուրջը տղայքն առել ձուարել էր Նազլուն։

—Ել բրթուձրմ հաց բեր, Նազլու, էսչաղս (էս ժամանակ) ինչի էք նստել...

—Հաց բէր... կայ որ բերեմ, դարտակ փորով քնել կըլլի...

—Ախչի էդ անասուածներն էլի ալոր չեն տուել...

—Հացը թանգ է, կրակ աղան, քիչ մը համբերով ապրեցէք...

—Հայ, սեւ-մութ ըլլիր էս ապրուստը, որ մենք կապրենք... Կնոջ նետը կարծես մարդու վերքին դիպաւ։ Արիւնոտայ վագրի նման խոր մռնչաց խեղճ Գալօն ու տան սեան հետ կանգնած տեղը դիք մնաց... «Դատարկ փորով քնել կըլլի»... հէչտ էր լսել կնոջ բերնից։

—Ափարա (հայրիկս) եկաւ, ապա (մայրիկ) ջան, հաց չը բերից... մինդրի տակից քաչքչելով կանչում էին փոքրերը...

—Ջա, էլ ինչի մոլրար, քրնը երկու հացրմ փոխ բեր ղրկեցնցէն, էս տղոցը ձէնը կարենք, աչենք Աստուած ինչ կուտայ...

—«Աչենք Աստուած ինչ կուտայ»... դէ տուել է, էլ ինչ կուզես... գարդ ու ցաւ, ցաւ ու գարդ... էրթամ, էրթամ, ղրկեցնցէն փոխ բերեմ... Մեծ չիբուխը կամաց կամաց վառելով պատասխանեց Գալօն։

Ղրկեցնց տունը մօտ էր, չատ մօտ, պատկեց, բայց Գալօն կէս ժամից հազիւ գարձաւ կռան տակին մի քանի գարի հաց ղրած խեղճ ու անճար աղքատին էլի խեղճի հացը պիտի կըշտացնէր, հարուստ աղայի հացն էլ մարդու կըշտացնէ... Մանր ու խոշոր մանուկները մինուրի տակից վժվժալով դուրս թռան ու մէջ առան կլոր փայտէ փոքրիկ խոնչան (սեղան), որի վրա կաւէ քրէզանով պպզել էր աղքատի սեւ օրվան ընկեր աղի ղըմին (կանաչ)։

—Ապա, էս օր պաս է...

—Պաս է, բալա, պաս, կերէք քնենք... Խեղճ տղայք, սան ուտիս իրը էիք տեսել, որ պան էք հարցնում... Գալօն իսկի ձեռք չը տուեց բերած հացի, թէեւ ինքն էր ամենից չուտ հաց ուզել։ Նա լուռ նստած, թինկը ամուր սեանը տուած, բոլոր ուժով չիբուխի կծու ծուխը ներս էր քաշում ու սրտի խիստ փոթորկից չրթունքները կրծելով, քուլա-քուլա բաց թողնում։ Ծուխը լաւ էր, բայց այդ ծուխը կարծես քիչ էր Գալօի մեծ վէրքի համար. նա դեռ չատ մեծ ծուխ ու բոցի էր սպասում... Բոլորն էլ լուռ, հանգիստ էին, ձէնձուդ չը կար, ամենքն իրանց գործով բռնված աչխատում են։ Մանուկները հարամու պէս, անխօս ու մունջ, գարի հացն ու աղի ղըմին բրթուռ արած, կոխում էին բերանները, ինչքան տեղ կար։ Նազլուն էլ լուռ, մերթ մի պատառ վերցնելով, ծոյլ ակամայ ծամծմում էր, մերթ թէչիկը կամաց կամաց պտտում, որ իր աղայի՝ Մարտիրոս աղայի թոռներին գուլբա ու թել հագցնէր։ Միայն քամին, հռհռոցով, «քրքչոցով» խեղճ աղքատի կեանքն է ծաղրում եւ ով գիտէ դեռ ինչքան վատ, դաժան օրեր գուշակում...

Յանկարծ գիւղում ինչ որ «հատար», հարայհրոցի ձայն ընկաւ, մարդիկ վազում, վազվզում են, իրար կանչում, «հատար» կանչում... Գալօն տեղից վեր թռաւ մի չարախինդ արտանց ժպիտ դէմքին դրոշմվեց այդ պահուն։

—Քա, էդ ինչ է, ինչ զալմաղալ, հայ հատար է...

—Ջես իմանայ, կրակը, կրակը կը գոռան... Կալը եանղուն (հրդեհ) է ընկել... ու գոռալով դուրս թռաւ։

—Կրակը, կրակը... եանղուն է... Նոր Գալօի յետքից լսվեց հատարը։ Եանղուն է... Ինչ հէչտ բան է բերնով ասել «եանղուն է». «եանղուն» գիւղում, այն էլ աչնան այդ պահուն, երբ կալերում խոտ ու օրնից ասեղ գցելու տեղ չը կայ...

Նոյն աւուր երեկոյեան Ծուխն առել էր Գ... գիւղը։ Դանիցը ոտք դուրս գնողը Մարտիրոս աղի կալն էր վազում, որ մուխի ու բոցերի մէջ կորել էր։ Քանի սայլնոց բրնձի պէս գարու դէզը, որ այդ օրը միայն կրել, դիզել էին Գալօի արտերից, գժոխքի պէս վառվում էր... Քամին էլ դեռ չնգչնգում էր ալ բոցերի հետ հռհռում, հաճարվում։ Սեւ մուխի մէջ չերտ բոցերը մահագոյժ, վախ կերտնների պէս փլփլում են։ Ամբողջ գիւղը գործի էր, որը եզարով, որը թիով, որը բահով, որն էլ ջրի գուղաներով աչխատում են։ Գալօն էլ էր նրանց մէջը. նոյն ժպիտը, չար ժպիտը, երեսին կրկղնում էր օրանը. բայց ով գիտէ հանգցնելու թէ աւելի թէժ կրակը գոլորշեցնէ նպատակով։

Ծուխ ու բոցի գժոխքի մէջ Գալօն ընկեր չատ ունէր, չատի դէմքին նոյն ինքնագոհ «արի ժպիտն» էր նչմարվում... Այ կրակը քանի գնում տարածվում էր եւ ահռելի ճարճատիւնը, ճկճկոցը քամու դաժան վոռոցի հետ խառնվում կանանց, մանուկների ճիչ ու լացին։ Կրակը սրբեց, լափեց, տարաւ մոխրակոյտի վերածեց Մարտիրոս աղի ամբողջ կալն ու խոտերի էլ կէսը այրեց, երբ հազիւ հազ կարողացան ամբողջ գիւղով, մի կերպ մարել, հանգցնել։

Կէս գիշերը անց՝ ամբոխը տուն գրվեց։ Գալօն էլ տուն գնաց ու կեանքի մէջ գէթ մի գիշեր, թէպէտ քաղցած, բայց հովացած, հանգիստ սրտով քուն մտաւ։ Կրակը մարեց... եւ իր հետը քանի քանի Գալօի պէս վառված, դաղված բոց սրտերի կրակ մարեց։ Բայց էն կալից, Մարտիրոս աղի մեծ կալից դեռ գալիս է խոտ-օրանի խանձահոտը..., որ իր արած «մեծ գործերի» «լաւ գործերի» խունկ-կընդրուկն է...։

Ջաւախեցի

ը «Band Deutscher Bodenreformer» ընկերութեան յունիսի 5-ի նիստում կարդացել է մի դասախօսութիւն հայկական նոր գրականութեան մասին։

—

Մայրաքաղաքի լրագիրների խօսքով, Բերլինի հրատարակիչ Արտուր Կիրխհօֆ դիտաւորութիւն ունի երկու ուղեկիցների հետ ճանապարհորդութիւն կատարել աւտօմօբիլով Եւրոպական եւ Ասիական Ռուսաստանում՝ զանազան չրջանների առեւտրա-արդիւնաբերական կեանքը ուսումնասիրելու նպատակով։ Պ. Կիրխհօֆի խնդիրքի համաձայն, ֆինանսների մինիստրը դիմել է հաղորդակցութեան ճանապարհների մինիստրին՝ խնդրելով, որ մեր երկաթուղիները վարձ չվերցնեն ճանապարհորդի բաժի համար, որը չէ կարելի դնել աւտօմօբիլի վրա։

—

Յունիսի 8-ին Օդեսայից Թիֆլիս հասան նօվօրօսիյսկի համալսարանի պրոֆէսօրներ Պարիեվ եւ Բարակով եւ նոյն համալսարանի 19 ուսանողներ, որոնք ճանապարհորդելու են կովկասում։ Դրանք Թիֆլիսում չորս օր մնալուց յետոյ կերթան Ջինջռակ, որտեղից կը վերադառնան Թիֆլիս։ Ապա նրանք այցելելու են՝ կարայազ, Բագու, Պետրովսկ, Վլադիկավկաղ, Մցխէթի, Բօրժօմ, Ախալցխա, Աբաստումանի, Քութայիս, Տկվիբուլի, Պեատիգօրսկ, Կիսլովոդսկ, Ժէլեզնովոդսկ, Եկատերինօդար, Նօվօրօսիյսկ եւ Օդեսա։ Կիրակի, յունիսի 9-ին, նրանք այցելեցին Թիֆլիսի մուզէյը։

—

«Ցնօրիս Փուրցէլի» լրագիրը լսել է, որ Կիլիոն եպիսկոպոսը դիմել է հոգեւոր բարձր իշխանութեանը՝ խնդրելով ազատ կացուցանել իրան ծառայութիւնից եւ թոյլ տալ ապրել Դարէի Գարէջի վանքում, կամ ուղարկել իրան Երուսաղէմ այնտեղ գտնվող հին ձեռագիրները ուսումնասիրելու նպատակով։

—

Լրագիրների ասելով՝ Լ. Տօլստոի առողջական դրութիւնը այնքան բարւոքվել է, որ նա յունիսի 10-ին Ղրիմից վերադառնում է Եասնայա Պօլեանա։

—

«Кавк. Мин. Вод.» լրագիրը հաղորդում է, որ կիսլովոդսկ է եկել առաջը հանգստանալու համար յայտնի հրապարակախօս Ն. Կ. Միխայլովսկի։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Քրէական գործեր Ղուբայի գաւառում այնքան չատ են կատարվում տարվայ ընթացքում, որ նրանց ոչզնական քննութիւնը կատարելու համար նոյն իսկ բաւականութիւն չեն տալիս հինգ քննիչներ, այն է՝ Ղուբայի քաղաքային, Ղուբա գաւառակի, Հուսարի, Մուչկիւրի եւ Դիվիչու մահալների քննիչները։ Այդ բոլորի վրա հսկում են երկու պրոկուրօրներ։ Շատ յանցանքներ գործվում են Դիվիչու մահալում, ուր ամիսը կատարվում են 30—35 յանցանքներ, յետոյ հերթը գալիս է Ղուբա գաւառակին, ուր ամիսը 28 գործից չէ անցնում։ Մուչկիւրն ու Հուսարը տալիս են ամիսը միջքանակ գործեր, այն է մինչ 18 գործ, իսկ ամենաասակաւը Ղուբա քաղաքի գործերն են, որոնք չեն անցնում 8—10-ից։ Գործերի այդքան չատութեան պատճառով քննիչները, ի հարկէ, ժամանակ չեն գտնում քննել գործերը, քանի որ միաժամանակ նոյն օրում կատարվում են մօտ 312 յանցանքներ Ղուբայի գաւառի զանազան գիւղերում։ Այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով, Բաքուի նահանգական դատարանը իր գրաւոր զեկուցումով անցեալները միջնորդեց արդարադատութեան մինիստրութեան առաջ, որ այստեղ բացվի նաեւ մի (վեցերորդ) քրէական բաժին (слѣдственный участокъ)։ Մինիստրութիւնը յարգեց նահանգական դատարանի խնդիրը եւ թոյլատրեց, որ Ղուբայում հիմնվի 6-դ քրէական քննական բաժին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Բերլին, յունիսի 12-ին

Ժամանակիս ազդեցութեան պատճառով անկարող եղայ իր ժամանակին գրել յունիսի 6-ին Բերլինում տեղի ունեցած առաջին «Հայկական երեկոյթի» մասին։ Սակայն այդ երեկոյթի մանրամասնութիւնները ընթերցողին յայտնի կը լինեն պ. Լ. Բաբայեանի նամակից. այնպէս որ ինձ այժմ մնում է միայն պատկերը ամբողջացնել, հաղորդելով մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ։

Բերլինում հայկական երեկոյթ... սկզբում դա անկարելի մի բան էր թվում։ Ասողներ կային, թէ անհրաժեշտ է նախապէս մի քանի հազար մարկ պատրաստել եւ ապա նոր այդպիսի մի մեծ ձեռնարկ սկսել։ Պնդողներ կային, թէ հայկական երեկոյթը միայն գերմանացիների հեգնանքը կարող է չարժել եւ այլն։ Բայց մի քանի հոգի, առանց ուշք դարձնելու այդպիսի անհիմն դատողութիւնների վրա, առանց վհատելու մի քանի հայ ուսանողների բացասական դիրք բռնելուց, մեծ եռանդով սկսեցին գործը եւ փառաւոր աջողութեամբ գլուխ հանեցին։

Ծանօթների եւ լրագրութեան միջոցով մղած պրօպագանդը ունեցել էր իր հետեւանքը. ժամը 8-ին արդէն բոլոր տոմսակները վերջացած էին եւ մարդիկ կօնտր-մարկաներով էին ներս մտնում։ Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր ամենաընտիր հասարակութեամբ։ Տանեակներով աչքի էին ընկնում պրօֆեսօրներ, բոյֆստագի պատգամաւորներ, հրապարակախօսներ ու ուրիշ հասարակական գործիչներ։

Երեկոյթը սկզբից մինչեւ վերջը ընդհանուր հիացմունքի առարկայ էր դարձել։ Bis-երին ու ծափահարութիւններին վերջ չը կար։ Մերթ ընդ մերթ այս ու այն կողմից լսվում էին գոհունակութեան բացականչութիւններ՝ «Wunder schön! Հրաշալի է»... «Ach, wie nett! ախ, որքան գեղեցիկ է»... եւ այլն։

Մի յատուկ սեղանի չուրջ հաւաքված էին զանազան լրագիրների թղթակիցներ եւ արձանագրում էին ճառերը։ Դեռ երեկոյթից առաջ կարդադրիչները դիմում էին արել 22 խմբագրութիւնների, խնդրելով նրանց աջակցութիւնը։ Եւ գրեթէ դրանք բոլորն էլ երեկոյթի մասին լուրեր էին հաղորդել իրանց թերթերում։ Սակայն այդ լուրերը գերմանական տեմպերամենտին յատուկ սառնութեան դրոշմն էին կրում։ Միայն «Vorwärts»-ն էր, որ այդ սառնութեան քողը պատռեց, գրելով «...նահատակ հայ ժողովրդի զաւակները—ուսանողները իրանց հայրենիքի որբերին օգնելու համար երեկոյթ են տալու չատ եւ չատ հետաքրքրական ծրագրով... պէտք է այցելել այդ երեկոյթը, պէտք է օգնել դրանց... այդ ձեռնարկութիւնը համակրելի է թէ իր ներքին բովանդակութեամբ եւ թէ նպատակով»...

Երեկոյթից յետոյ բազմաթիւ թերթեր գրեցին իրանց կարծիքը։ Բոլորն էլ հիացմունքով էին խօսում։ Մի առ մի առաջ բերել այդ կարծիքները—մեզ չատ հեռուն կը տանէր, ուրեմն բաւականանանք միայն մի չանի նմուշներով.

—«Երէկ Philharmonis—այսում տեղի ունեցաւ հայ ուսանողութեան նախաձեռնութեամբ կազմած հայկական երեկոյթը... ընդարձակ դահլիճում խռնված հոծ բազմութիւնը կենդանի ապացոյց էր այն չերմ համակրութեանը, որ տածում են Բերլինում դեպի հայկական գործը։ Բազմաթիւ պրօֆեսօրներ կային... երկար եղեգեիկ խումբը բաց արեց երեկոյթը, երգելով հայբայլերգը «Մեր Հայրենիք»։ Դրանից յետոյ խօսեց պրօֆ. Պարնակ «Հայոց եկեղեցու մասին»։ Նա ցոյց տուեց, որ հայերը կապված են գերմանացիների հետ թէ՛ ցեղական ծագումով, թէ կուլտուրայով... նրանք ամենահին քրիստոնեայ ազգերից են եւ դարերի ընթացքում արիւնալի կռիւ են մղել իրանց կրօնի,—եկեղեցու համար... նրանք միանգամայն արժանի են գերմանացիների համակրութեան ու օգնութեանը։ Պարնակի ճառին հետեւեցին երգ, երաժշտութիւն եւ Dr. Lepsius-ի ու Dr. Rohrbach-ի բանախօսութիւնները...» «Vossische Zeitung»։

—Բերլինում ապրող հայերը հաւաքվել էին տարիներ առաջ հեռու հայրենիքում սպանված կանանց եւ երեխաների յիշատակը տօնելու։ Երեւում է Բերլինում դեռ չէ սառել կարեկցութիւնը դէպի դժբաղդ հայերը, որովհետեւ երեկոյթը մեծ բազմութիւն էր գրաւել... Ազգային եւ ժողովրդական երգերը ազդու էին իրանց փափուկ, մի նոր տօնով (ձայնով), որը յատուկ է սլաւօնական երաժշտութեանը։ Երկսեռ երգեցիկ խմբի գեղարուեստական տարազը աւելի ուժեղացնում էր երգված մելոդիաների գրաւչութիւնը...

Կենդանի պատկերները ներկայացնում էին հայական մօտիկ անցեալը։ Նրանք յիշեցնում էին «հայի թշուառութիւնը»... «Der Tag» եւ «Lokal-Anzeiger»։

—Հայկական երեկոյթը չատ գեղեցիկ ու հետաքրքրական էր... Պրօֆէսօր Հարնակը խօսեց «Հայկական եկեղեցու մասին», դօկտօր Լեպսիուսը բնորոշեց հայերի դերը արեւելքի կուլտուրական զարգացման գործում... Դօկ. Րօրբախ արեց մի քանի ակնարկներ հայերի կենցաղավարութեան մասին... «Berliner Tageblatt»։

—Հայկական այդ երեկոյթը իր բովանդակութեամբ պատիւ էր բերում կազմակերպողների կարեկցութեանը, ճաշակին ու գեղարուեստական հասկացողութեանը։ Այնքան գեղեցիկ էր նա... ընդարձակ դահլիճը լիքն էր խռնուն բազմութեամբ։ Հասարակութեանը պատճառած հաճոյքը բնորոշ ու գրաւիչ էր եւ միանգամայն արժանի էր համակրութեան այն բուռն արտայայտութեանը, որ ցոյց տուին հանդիսականները... գեղարուեստական էին երգեցիկ խմբի չորերը... Զարմանալի ազդու էին կենդանի պատկերները...» «Berliner Zeitung»։

Կարծում ենք այդքանն էլ բաւական է, որպէս զի ընթերցողը» դաղափար կազմէ, թէ «հայկական երեկոյթը ինչպիսի հիացմունք է պատճառել գերմանացիներին։

—Շուտ-չուտ կազմակերպեցէք այդպիսի երեկոյթներ, ասում էր ինձ գերմանական ազդեցիկ թերթի խմբագիրը։ Դա ամենալաւ միջոցն է հայկական կեանքը եւրօպացի հետաքրքրութեան նկատ դարձնելու համար։ Մի այդպիսի երեկոյթը աւելի չատ բան կարող է անել, քան թէ տասնեակ յօդուածներ...

Իրաւացի կարծիք։ Ուրեմն պէտք է ցանկալ, որ այդ երեկոյթը առաջինն ու վերջինը չը լինի։ Հոգն արդէն պատրաստ է եւ ճանապարհը հարթած։ Առաջին փորձի այդպիսի մեծ աջողութիւնը խթան պիտի լինի ապագայում էլ այդ գեղեցիկ գործը չարունակելու համար։

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսի իտալական դեսպան մարկիզ Մալապինա Կ. Պօլսից արձակուրդով հեռանալուց առաջ ունկնդրութեան ընդունվեց սուլթանի կողմից, որ տեւեց չատ երկար։ Ունկնդրութեան ժամանակ չօշափվեց Տրիպօլիսի հարցը։ Իտալական դեսպանը հաւատացնում էր սուլթանին, թէ սուտ են այն լուրերը, որ իբր թէ Իտալիան դիտաւորութիւն ունի չուտով գրաւել Տրիպօլիսը։ Բացի դրանից դեսպանը հաղորդեց սուլթանին, որ յունիսին Կ. Պօլիս այցելութեան կը գայ իտալական նաւատորմով ծովապետ Պալումբօ։ Սուլթանը չատ գոհ մնաց մարկիզ Մալապինայի խօսքերից եւ չնորհեց նրան Մէջիդիէի չքանչանը ադամանդներով զարդարված։

—Կ. Պօլիս տեղեկութիւններ են ստացված այն բանի մասին, որ Վադաիի, Դուգուի եւ Բերմայի սուլթանները վճռեցին ուղարկել թիւրքաց սուլթանի մօտ մի միսիա, որ բաղկացած կը լինի սուդանական 10 էմիրներից։ Այդ միսիան 3 միլիօն ֆրանկ արժողութեան ընծաներ կը բերի սուլթանին, եւ թոյլտուութիւն կը խնդրէ ուղղահաւատների հրամանատարից թիւրքաց դրօշակը բարձրացնել սուդանական վերոյիշեալ երկիրների վրա։ Դարֆուրի, Վադաիի, Դուգուի եւ Բերմայի սուլթանների ձեռքով ստորագրած թղթի մէջ խոստումնք է տրվում թիւրքաց սուլթանին՝ նրա դրօշակի պրէստիժը պաշտպանել դրամով եւ զօրքերով։ Հաւատացնում են, որ Սուդանի սուլթաններին դրդեց այդ քայլն անելու այն լուրը, թէ չուտով ֆրանսիական արշաւանք է ուղարկվելու Վադաի դէմ, իսկ Դարֆուրի դէմ կուղարկվի անդլիական արշաւանք հէնց որ Եգիպտական Սուդանը կը խաղաղվի։ «Figaro» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հաւատացնում է, որ այդ միսիան Կ. Պօլսում աջողութիւն չի ունենայ, որովհետեւ սուլթանը ամենեւին չէ ցանկանում չարուցանել աֆրիկական հարցը եւ բարդութիւններ եւրօպական պետութիւնների հետ։

—Կ. Պօլսից հեռագրում են «Berl. Tag.» լրագրին պալատական զանազան բարձրաստիճան պաշտօնեաների կալանաւորման մասին, առաւելապէս սուլթան Աբդուլ-Ազիզի աւագ որդի պրինց Իւսուֆ Իզէդդինի մտերիմներից։ Ի հարկէ, դրանք բոլորն էլ մեղադրվում են դաւադրութեան մէջ սուլթանի դէմ։

—Պօլսից Ֆրանսիական եւ գերմանական հասարեա բոլոր լրագիրները հաղորդում են, որ լեհական ազնուականութիւնը որոշեց դուրս գալ քաղաքից՝ երբ կայսրը առաջիկայում կայցելէ քաղաքը։ Լեհական լրագիրների մեծամասնութիւնը խորհուրդ է տալիս լեհացիներին զգոյշ լինել եւ խուսափել ցոյցերից, որոնք կարող են վնասել լեհական գործին։

—«Information» լրագրին հաղորդում են Կ. Պօլսից, որ կառավարութեան կարգադրութեամբ Թիւրքիայում արգելվում է որ եւ է հրատարակչութիւն։ Այդ կարգադրութեան չնորհիւ բազմաթիւ տպարաններ փակվեցին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

8 յունիսի

ՎԱՐՇԱՎԱ։ «Калишская Газета» հաղորդում է, որ կալիշեան երկաթուղին պրուսականների հետ միացնելու հարցը մօտենում է իր լուծմանը։

ՎԻԵՆՆԱ։ Ռուսաց դեսպան կոմս Կասինիսին ունկնդրութեան ընդունեց կայսրը։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Ժամանեց ներքին գործերի մինիստրի օգնական իշխան Սվեատօպօլկ-Միրսկին։

ԿԻԵՎ։ Զինուորական նահանգական դատարանը, քննելով գիւղացի Զէպէգինի գործը, որին դատի է ենթարկել գեներալ-նահանգապետը զինուորական ժամանակի օրէնքներով, Զէպէգինին յանցաւոր ճանաչեց պաչտօնաթող գեներալ-լէյտենանտ Վէյսի կեանքի դէմ փորձ անելու համար։ Դատարանը վճռեց՝ Զէպէգինին զրկել բոլոր իրաւունքներից եւ ամէժանակիր աչխատանքներին ենթարկել քսան տարով։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Հրատարակված է պաչտօնական հերքումն «Մոսկվա-ստատսբլատէդ»-ի նկատողութեան, թէ վերացված է այն նորակոչ զինուորների հաւածանքը, որոնք չեն եկել ներկայ տարվա մարտի 30-ի կարգադրութեամբ։

ԿԱԶԱՆ։ Ծունիսի 8-ին սկսվեց հրդեհ քաղաքի թաթարական մասում. այրվեցին քարեայ չատ տներ, քարեայ մզկիթ եւ չատ խանութներ։ Վնասները միլիօնաւոր են։

ՊԱՐԻԶ։ Սպասվում է «Ընդհանուր դրամարկղ ընտանիքների համար» ընկերութեան փակումն, որից հանրապետութեան նախագահի հրովարտակով իլվեց կօնցէսիա օպերացիաներ կատարելու համար։ Ասում են, որ պահեստի դրամագլխում 24,000,000 պակասորդ է երեւացել։

ՎԻԵՆՆԱ։ «Neue Freie Presse» լրագրին Լվովից հաղորդում են, որ տեղական սէյմի չրջանները եւ լեհական չրջանի անդամները ըէյխսռատում կայացրին հետեւեալ որոշումը. «Ի նկատի ունենալով այն, որ սէյմում արած դեկլարացիայում 1901 թ-ի դեկտեմբերի 31-ին եւ Գալիցիայի մարշալի երէկվայ ճառի մէջ արված է արտայայտութիւն պատգամաւորների զգացմունքներին իրանց համացեղակիցների հալածանքի վերաբերմամբ Պրուսիայում, պատգամաւորները դէմ են որ եւ է առաջարկութիւններ անելու ապագայում»։

9 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն պալատում սուդ է նչանակված 24 օրով ազգօնական թագաւորի մահվան պատճառով։

ԼՎՕՎ։ Սէյմում Գալիցիայի մարշալ կոմս Պատօցկի ասեց, մասնացոյց անելով Լեհաստանի պատմութեան վրա, թէ մի ազգ, որ գնահատում է իր անցեալը եւ ապագայ ունի գործունէութեան համար, չէ կարող ջնջվել բացառական օրէնքներով կամ որ եւ է հալածանքներով։ Պաչտպանութեան համար հարկաւոր չէ անօգուտ ցոյցեր անել, այլ աչխատել ուժեղացնելու ազգային ոյժը, կատարելով իր պարտաւորութիւնը, եւ այստեղ, այս երկրում, պէտք է դատապարտել մէկ ազգի առելութիւնը դէպի միւսը։ Թող իւրաքանչիւր ազգ գործէ իր զարգացման համար առանց նախապաչարմունքների դէպի միւսը։ Այդ ճանապարհը լաւ հետեւանքների կը հասցնէ։

ՍԻԲԻԼԼԵՆՕՐՏ։ Թագաւորի մարմինը փոխադրված է Դրեզդէն։ Թաղումը տեղի կունենայ երկուչաբթի։ Թագաւոր Գէօրգ արքայական ընտանիքի հետ ուղեկցում են նչխարքը։

ՊԱՐԻԶ։ Բելգիական մինիստր նախագահը ստորագրեց 106,000,000 ֆրանկի փոխառութեան վերաբերեալ պայմանագիրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրը որոշեց թոյլատրեց «Пріднѣпровскій Край» լրագրի հրատարակութիւնը, որ դադարեցրված էր ներկայ տարվայ մարտի 30-ի կարգադրութեամբ։

10 յունիսի

ԿԱԶԱՆ։ Այսօր քամու ժամանակ կրկին սկսվեց հրդեհը թաթարական մասում. այրվեցին չատ հաւատացեալների տներ. բազմաթիւ մարդիկ առանց ապաստանի մնացին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր լոյս տեսած «Вѣстникъ Финансовъ» ամսագրում ճակնդեղի ցանքերի հրապարակը, կոմիսիայի հարկերի գլխաւոր վարչութեան փաստերով, մայիսի 15-ի համար ցոյց է տրված 543,536 դէսեատին, համարեա 3%-ով աւելի անցեալ տարվանից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչները՝ ԹԱԳՈՒԻՀ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ԾԱԾԿԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բագու շաբաթը մէկ անգամ ուրբաթ օրերը դուրս է գալիս առաւօտեան 10 ժամ 15 րոպ. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու գիշերվայ 12 ժամ 11 ր. (1 ժ. 9 րոպէին)։

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս ուրբաթ օրերը գիշերվայ 12 ժամ 52 րոպէ (1 ժ. 50 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 2 ժ. 45 ր. (3 ժ. 43 ր.)։

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 5 ժ. 2 ր. (6 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 9 ժ. 4 ր. (10 ժ. 2 ր.)։

Փոստատար գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 56 ր. (4 ժ. 54 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 9 ր. (6 ժ. 7 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 5 ժ. 40 ր. (6 ժամ 38 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 27 ր. (3 ժ. 25 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 8 ժ. 29 ր. (9 ժ. 27 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.)։

Փոստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 11 ժ. 5 ր. (12 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 11 ժ. 34 ր. (12 ժ. 32 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 16 ր. (7 ժ. 14 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 7 ժ. 5 ր. (8 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 39 ր. (7 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 24 ր. (8 ժ. 22 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 12 ժ. 5 ր. (1 ժ. 3 ր.)։

Փոստատար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.). հասնում է Սանահին 1 ժ. 35 ր. (2 ժ. 33 ր.), Ղարաքիլիսա գիշերվայ 3 ժ. 32 ր. (4 ժ. 30 ր.), Ալէքսանդրոպոլ առաւօտեան 7 ժ. 17 ր. (8 ժ. 15 ր.), Կարս ցերեկվայ 11 ժ. 1. (11 ժ. 59)։

Փոստատար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 57 ր. (5 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 8 ժ. 5 ր. (9 ժ. 3 ր.), Ղարաքիլիսա 11 ժ. 42 ր. (12 ժ. 40 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.)։

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.) Ալէքսանդրոպոլ գիշերվայ 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.)։

Խառն գնացք Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս առաւօտեան 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Ղարաքիլիսա առաւօտեան 8 ժ. 35 ր. (9 ժ. 33 ր.) և Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 37 ր. (4 ժ. 35 րոպէին)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ԴԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հարեւ.)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ՈՒՍՈՑՈՂՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վէներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկովացի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բարաճասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԲՐԵԿՈՆՆԵՐԸ

Ն. Ն. Թոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ), վէներ. և մորթու հ.

Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիոսկի—տանը. ծաղկահատ և բուժքրչական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ

ԼԷՕ

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՐՂՈՒԹԵԱՆ

Կենսագրական-պատմական ցեսուքիւն

Զորս պատկերով (Յովսէփ կաթ. Արղութեան, կայսրուհի Եկատերինա II, իշխան Գ. Պօտեօմկին, կոմս Յովհաննէս Լազարեան)։

ԳԻՆՆ Է 60 ԿՕՊԵԿ

Ծախվում է «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն. Тифлисъ, редакція газ. «Мшакъ».

ՍՐՍԱՆՈՎ ՊԱՏԻՒ ՈՒՆԵՄ ԾԱԾԿԱՐԱՐԵԼՈՒ

որ երկաթուղու Աղստաֆա կայարանում գործերի դադարելու պատճառով, ներկայ յունիս ամսի 20-ից յանձնարարական գրասենեակս փակելով՝ փոխադրում եմ Թիֆլիս, ուստի ինձ հետ գործ ունենալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել հետեւեալ հասցէով.

3-я Гончарная ул., № 20, собств домъ.
1—4 *Մկրտիչ Գաբրիէլեանց*

ԱԲԱԹՈՒՄԱՆՈՒՄ

մատչելի գնով տրվում է ամարանոց, 6 սենեակից բաղկացած, իրանց յարմարութիւններով։ Դանվում է հեռագրատան վերեւի յարկում։ Կարելի է առանձին տալ 1, 2, 3 սենեակ։ Հարցնել՝ Աբաթումանում, Տիգրան Մէոտենճեանցին։ 2—3

ԾԱԾԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սրանով պատիւ ունեմ հաղորդել մեզ հետ գործ ունեցող յարգելի պարոններին, որ Աղստաֆա երկաթուղու կայարանում գործերը դադարելու պատճառով՝ փակվում է մեր յանձնարարական գրասենեակը ներկայ տարվայ յուլիսի 1-ից։ Փոփոդրելով նոյն գրասենեակը Երեւան, խնդրում եմ դիմել մեզ այնտեղ հարկաւոր դէպքում։

5—10 *Պօղոս Գ. Պօղոսեանց*

ԾԱԾԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՐԿԱՒՈՐ Է

մի ուսուցիչ Արմաւիրի ուսումնարանի համար, որը ուսումնարանում կունենայ 18 դաս հայոց լեզուից, երգեցողութիւնից, իսկ եկեղեցում խմբապետութեան պաշտօն։ Ուսմերը երգում է Եկմալեանի քառաձայն պատարագը։ Ռոճիկ 400 րուբլի։ Դիմել՝ Армянскъ, Тавр, губ., попечителю Г. Г. Альянаки.

6—6

ՀՈՐՈՒՆԱՑԻՆ ԳԵՐԱԿԱՍՏԱՆԻ

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ

ԶԷՅԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծոցի առեւտուրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի և անաւոր կէնտրօններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէն. Zeytoon C. G. Buchire Persian-Gulf. 21—100

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտւութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաշերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մոլները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ արուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը դանվում է Պետերբուրգում, Պուշկինեան փողոց, տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. Նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պօպովի եւ Աբրիամակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պօստով։ 90—100

„ՇՂԹԱՅ“

Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը հրաւիրում է Ընկերութեան պ. պ. բաժնետէրերին արտակարգ ընդհանուր ժողովի, որը տեղի է ունենալու երեքշաբթի օր, յունիսի 18-ին, ուղիղ 8 ժամին երեկոյեան, Գուբգենովի այգում, Միքայէլեան պրօսպէկտ, № 143։

Ձրաղմունքի առարկաներն են.

1) Վարչութեան հինգ անդամի ընտրութիւնը։
2) Վերաքննիչ յանձնաժողովի 3 անդամի եւ նրանց երկու տեղապահների ընտրութիւնը։
3) Ընկերութեան գործունէութեան յետագայ ժամանակի հրահանգի որոշումը։

Ծայտարարվում է նոյնպէս,

որ Վարչութիւնը նշանակել է 5% վճար, այսինքն իւրաքանչիւր փային 5 րուբլի ներկայ յունիսի 19-ից մինչեւ 28-ը ներփակված եւ յունիսի 29-ից մինչեւ յուլիսի 8-ը տուգանքով։ Համաձայն ընկերութեան պայմանագրի 7-րդ յօդուածի։

Վճարի ժամանակ պէտք է ներկայացնել անպատճառ բաժնետոմսերը։

(12, 15 եւ 18 յ.) 1—3

ОТКРЫТА ПОДПИСКА

на ежегодный, роскошно-иллюстрированный, справочно-литературный сборникъ.

„ВЕСЬ КАВКАЗЪ“,

посвященый детальному и всестороннему изслѣдованію Кавказскаго края во всѣхъ отношеніяхъ.

Сборникъ выйдетъ въ концѣ 1902 года, въ форматѣ журнала „Нива“, и будетъ состоять изъ слѣдующихъ отдѣловъ. Часть первая: 1) Календарный, 2) Правительственныхъ учрежденій, 3) Справочный, 4) Статистическій и 5) Объявленій. Часть вторая: 1) Историческій. 2) Общественной жизни, 3) Сельскохозяйственный, 4) Торгово-промышленный, 6) Разныхъ статей, 6) Путешествій и 7) Литературный.

Издатели сборника „Весь Кавказъ“, широко предоставляя сотрудничество въ немъ всѣмъ лицамъ, занимающимся трудами по кавказовѣдѣнію, предлагаютъ за печатный листъ въ 16 страницъ оригинальной статьи 50 руб., компилятивной—40 руб., и за листъ напечатанной гдѣ либо статьи—20 руб. Размѣръ статьи не долженъ превышать двухъ печатныхъ листовъ. Лица, желающія сотрудничать, приглашаются теперь же сообщить точное заглавіе статьи, ея размѣръ и къ какому отдѣлу сборника таковая относится, а самыя статьи, должны быть присланы для просмотра не позже 10-го сентября текущаго года. Причитающійся гонораръ сотрудники получатъ по одобреніи статьи и послѣ выхода въ свѣтъ изданія. Статьи по кавказовѣдѣнію, размѣрами болѣе двухъ печатныхъ листовъ, принимаются на особыхъ условіяхъ для печатанія отдѣльными выпусками подъ заглавіемъ „Библіотека сборника Весь Кавказъ“.

Издатели сборника почтительнѣйше просятъ правительственныя учрежденія, предсѣдателей ученыхъ и благотворительныхъ обществъ и другихъ лицъ, сочувствующихъ цѣлямъ изданія, оказать возможное содѣйствіе присылкой своихъ годовыхъ отчетовъ, обзоровъ, докладовъ, записокъ, историческихъ документовъ, мемуаровъ и вообще разныхъ матеріаловъ, касающихся той или другой отрасли дѣятельности учрежденій Кавказскаго края.

Помѣщенный въ программѣ сборника отдѣлъ объявленій имѣетъ цѣлью предоставить разнымъ фирмамъ, заводамъ, фабрикамъ, магазинамъ и т. п. помѣщать свои объявленія, составляющія единственно вѣрный и широкій путь къ развитію торговаго дѣла: Плата за объявленія: на цѣлой страницѣ—75 рублей, на 1/2 страницы—50 руб., на 1/4 страницы—35 руб., на 1/8 страницы—20 руб. и на 1/16 страницы—10 руб.

Лица и фирмы, желающія выписать сборникъ или помѣстить въ немъ свои объявленія, приглашаются выслать въ редакцію причитающіяся деньги и самый текстъ объявленія.

Требуются дѣятельные агенты по сбору объявленій и подписки на сборникъ въ разныхъ городахъ за плату двадцати процентовъ съ поступившихъ при ихъ срдѣйствіи денегъ. Книгопродавцамъ будетъ сдѣлана значительная уступка.

Редакціямъ газетъ, помѣстившимъ настоящее объявленіе, будетъ предоставлено право напечатать безплатно свои объявленія въ сборникѣ.

Цѣна за сборникъ 5 руб. Подробная программа сборника разослана и высылается по требованію.

Адресъ редакціи: Тифлисъ. Грузинское издательское товарищество. Контора сборника „Весь Кавказъ“. 2—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԴՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են հետեւեալ թատրօնական պիէսները՝

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ, Աչնանային երեկոյ գիւղում, վօդեվիլ 1 արար., թարգ. Գ. Շահրուղեանի, գ. 25 կ.
» *Ժանօ եւ Ժանէտ, օպերա-վօդեվիլ 1 գործ., թարգմ. Գ. Շահրուղեանի, գ. 40 կ.*
» *Տիկինը նրան սպասում է, կատակ. 1 արար., թարգ. Ց. Մէլիք-Ցակոբեանի, գ. 40 կ.*
» *Անանուն կատակ, կատակ. 1 արար., թարգմ. Ի. Զիլկեանի, գ. 40 կ.*
ՂԱԶԱՐԵԱՆ ՑԱԿ. 1) Հավալլա, վոդ. 1 ար. 2) Կրթութիւնը խաթայ չէ, կատակ. 1 ար. գ. 15 կ.
ՄՕԼԻԷՐ, Կեղծ ազնուհիք, թարգ, ֆրանս. Մէլիք Ց. Պէյլիքճեանի, գ. 40 կ.
» *Թուղթ բժիշկ, Մէլիք Ցւ Պէյլիքճեանի, գ. 25 կ.*
» *Բռնի ամուսնութիւն, կօմէդիա 1 արար., գ. 40 կ.*
» *Տղամարդկանց խրատ, կատակերգութիւն 3 արաւոտածով, գ. 30 կ.*
» *Աչնանային երեկոյ գիւղում, թարգմանութիւն Գ. Շահբազեանի, գ. 40 կ.*
ՄԱՆՈՒԿԼԵԱՆ Լ., Դօկտօր երուանդ Բօյայեան, կօմէդիա 4 գործողութեամբ, գ. 50 կ.
» *Տիգրանուհի, դրամա 5 արար. Թիֆլիս, գ. 50 կ.*
ՑՈՎՀԱՆՋԱՆԵԱՆ կար., Աբաս, թատերգութիւն 5 արար. գ. 30 կ.
ՇԷՔՍՊԻՐ Վ., Օտէլլօ Վէնետկի Մաւր, ողբերգ. 5 ար., թարգ. անգլ., Ստ. Սուլխան. գ. 60 կ.
» *Վէնետիկի վաճառականը, թատերգ. 5 արար., թարգ. Յովհ.-խան Մասեհ. գ. 40 կ.*
» *Րօմէօ եւ Ջուլէտ, ողբերգ. 5 ար., թարգ. Յովհ.-խան Մասեհեանի, գ. 60 կ.*
» *Արքայ Լիր, ողբերգ. 5 արար., թարգմ. անգլ. Յովհ.-խան Մասեհեանի, գ. 50 կ.*
» *Լիր թագաւոր, ողբերգութիւն 5 արար., Ստ. Մալխասեանի, գ. 1 ր.*
» *Մակբեթ, ողբերգութիւն 5 արար., թարգման. Ստ. Մալխասեանի, գ. 50 կ.*
» *Ջուր տեղը մեծ աղմուկ, կատակ. 5 արար. գերմ. թարգ. Ց. Լալայեանի, գ. 25 կ.*
» *Ինչպէս կուզէք, թատերգ. 5 արար., թարգ, անգլ. Յովհ.-խան Մասեհ., գ. 25 կ.*
ՇԻԼԼԷՐ, Մարիա Սթիւարտ, ողբերգ. 5 գործ., թարգմ. գերմ. Գէորգ Բարխուդարեանի, գ. 50 կ.
» *Դօն Կարլօս, դրամատ.-բանաստ. 5 գործ. թարգ. Դ. Բարխուդարեանի, գ. 1 ր.*
» *Վիլհելմ Տէլլ, դրամա 5 արար. թարգ. Բարխուդարեանի, գ. 50 կ.*

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустяну, Лорисъ-Меликовская ул. № 11. 2—3

Дозволено Цензурою, Тифлисъ, 10 Іюня 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т=ва, Б.-Ванкская ул.